Կարգապահական գործ թիվ ԿԳ-26157

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2004), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հովհաննես Գառնիկի Թադևոսյանը **(այսուհետ նաև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ),** հայտնել է, որ զինվորական ծառայությունից ազատման հարցով իր իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար դիմել է փաստաբան Տիգրան Սարգսյանին:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանը մինչև պայմանագրի կնքումն իրեն հեռախոսազրույցի ընթացքում վստահեցրել է, որ դրական արդյունքի կհասնի և Դիմողն ենթակա է ազատման զինվորական ծառայությունից:

Նշել է նաև, որ մերժման դեպքում գործընթացը կշարունակվի դատական կարգով:

Պայմանագրի գինը կազմել է 1 միլիոն ՀՀ դրամ, որից 340.000 ՀՀ դրամին համարժեք գումարն ի սկզբանե ուղարկվել է Փաստաբանին:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանը դրսևորել է ոչ բարեխիղճ վերաբերմունք, միջնորդությունը ներկայացրել է ոչ պատշաճ հիմքով, ինչպես նաև երկրորդ անգամ միջնորդության մերժումից հետո այլևս չի պատասխանել իր զանգերին և հաղորդագրություններին, մինչդեռ քննիչի որոշումները ենթակա էին բողոքարկման, սակայն Փաստաբանի կողմից բողոք չի ներկայացվել որոշումների դեմ:

Վերոգրյալի հիման վրա, Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ:

Թիվ ԿԳ-26157-2-Ա
22.07.2026թ.

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 03.06.2026 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ ապացույց կամ դիրքորոշում չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Տիգրան Սարգսյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Հովհաննես Թադևոսյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ բացատրություն կամ դիրքորոշում չի ներկայացրել:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 03.06.2026 թվականին Փաստաբանին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 10.06.2026 թվականի բացատրությամբ հայտնել է, որ երկու տարբեր միջնորդություններ է ներկայացվել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 10-րդ կայազորային քննչական բաժին, որոնք չեն բավարարվել:

Փաստաբանը բացատրությանը կից ներկայացրել է ապացույցներ:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 13.04.2026թ. թիվ 281-Ա/ԿԳ-26157 որոշմամբ փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

17.04.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 17.06.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 17.06.2026թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 22.07.2026թ. ժամը 18:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև 22.12.2025թ. Փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրի պատճենով* ***(այսուհետ՝ Պայմանագիր):***

2. Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանը Հովհաննես Թադևոսյանի դեմ հարուցված զինվորական քրեական գործի շրջանակներում ներկայացնում է միջնորդություն քննչական կոմիտե հեռակա վարույթ սկսելու համար, Հովհաննես Թադևոսյանի ՀՀ գալու դեպքում սույն պայմանագրի 2-րդ կետի համաձայն վճարումը կատարելուց հետո ներկայացնում է վերջինիս շահերը զինվորական քրեական գործի ողջ ընթացքում: *Սույն փաստը հաստատվում է 22.12.2025թ. Պայմանագրի պատճենով:*

3. Պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ ծառայության արժեքը կազմում է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, որից 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը վճարվում է պայմանագրի կնքման պահին, իսկ մյուս 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամը վճարվում է հեռակա վարույթի միջնորդությունը բավարարելու դեպքում: *Սույն փաստը հաստատվում է 22.12.2025թ. Պայմանագրի պատճենով:*

4. Փաստաբանի կողմից ՀՀՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչություն ներկայացվել է երկու միջնորդություն՝ հեռակա վարույթ իրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: *Սույն փաստը հաստատվում է միջնորդությունների պատճեներով, ինչպես նաև կողմերի բացատրություններով:*

5. ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ՝ Է.Մ.Անտոնյանի կողմից մերժվել են Փաստաբանի կողմից ներկայացված միջնորդությունները: *Սույն փաստը հաստատված է համարվում 14.01.2026թ. և 09.02.2026թ. որոշումների պատճեներով, ինչպես նաև Դիմողի բացատրությամբ:*

6. Դիմողն իր դիմումում պնդել է, որ երկրորդ միջնորդության մերժումից հետո Փաստաբանն այլևս չի պատասխանել իր զանգերին և հաղորդագրություններին: *Սույն փաստը հաստատվում է Դիմումով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Տիգրան Սարգսյանը փաստաբան է հանդիսանում 28.11.2015թ. թվականից, և 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում երեք անգամ հարուցվել է կարգապահական վարույթ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.6.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Տվյալ դեպքում Պայմանագրով Փաստաբանը պարտավորվել է Դիմողի դեմ հարուցված զինվորական քրեական գործի շրջանակներում միջնորդություն ներկայացնել Քննչական կոմիտե՝ հեռակա վարույթ սկսելու վերաբերյալ: Գործի նյութերով հաստատվում է, որ Փաստաբանը ներկայացրել է երկու միջնորդություն՝ հեռակա վարույթ իրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ, որոնք քննիչի որոշումներով մերժվել են: Այսպիսով, Փաստաբանը կատարել է Պայմանագրով տվյալ փուլում նախատեսված գործողությունները, իսկ ներկայացված միջնորդությունների մերժումն ինքնին չի վկայում Փաստաբանի կողմից մասնագիտական պարտականությունները ոչ ողջամտորեն, ոչ բարեխղճորեն կամ ոչ որակավորված կատարելու մասին:

Գործի նյութերով չի հաստատվել նաև, որ Փաստաբանը Պայմանագրով ստանձնել է քննիչի որոշումների բողոքարկման պարտականություն կամ չի կատարել Պայմանագրով նախատեսված որևէ այլ գործողություն: Հետևաբար, Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի խախտումը հաստատված չէ:

Անդրադառնալով Դիմողի պնդումներին՝ Փաստաբանի կողմից դրական արդյունք երաշխավորելու, միջնորդությունը ոչ պատշաճ հիմքով ներկայացնելու և մերժման դեպքում գործընթացը դատական կարգով շարունակելու պարտավորություն ստանձնելու վերաբերյալ, որևէ ապացույցով չեն հաստատվել: Բացի այդ, Փաստաբանի մասնակցությամբ գործով

վստահորդի համար անբարենպաստ ակտի ընդունումն ինքնին չի առաջացնում Փաստաբանի կարգապահական պատասխանատվություն:

7.2. Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Նշված կանոնով նախատեսված պարտականությունը գործում է փաստաբանի կողմից ստանձնած հանձնարարության կատարման ընթացքում: Հետևաբար Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի խախտումը հաստատելու համար անհրաժեշտ է պարզել՝ Դիմողի մատնանշած ժամանակահատվածում առկա եղե՞լ է ընթացքի մեջ գտնվող հանձնարարություն, որի վերաբերյալ Փաստաբանը պարտավոր էր Դիմողին տեղեկություններ տրամադրել կամ պատասխանել վերջինիս հարցերին:

Տվյալ դեպքում Պայմանագրով Փաստաբանը պարտավորվել է Դիմողի դեմ հարուցված զինվորական քրեական գործի շրջանակներում միջնորդություն ներկայացնել Քննչական կոմիտե՝ հեռակա վարույթ սկսելու վերաբերյալ, իսկ Դիմողի՝ Հայաստանի Հանրապետություն ժամանելու դեպքում քրեական գործի ողջ ընթացքում նրա շահերը ներկայացնելու պարտականության առաջացումը պայմանավորված է եղել Պայմանագրի 2-րդ կետով նախատեսված վճարումը կատարելու հանգամանքով:

Գործի նյութերով հաստատվում է, որ Փաստաբանը ներկայացրել է երկու միջնորդություն՝ հեռակա վարույթ իրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ, որոնք քննիչի 14.01.2026թ. և 09.02.2026թ. որոշումներով մերժվել են: Դիմողը չի նշել, որ Փաստաբանը միջնորդությունների ներկայացման կամ քննության ընթացքում իրեն չի տեղեկացրել հանձնարարության կատարման ընթացքի մասին, այլ պնդել է, որ վերջինս զանգերին և հաղորդագրություններին չի պատասխանել երկրորդ միջնորդության մերժումից հետո:

Մինչդեռ գործի նյութերով չի հաստատվել, որ երկրորդ միջնորդության մերժումից հետո առաջացել են Պայմանագրով հետագա ներկայացուցչության իրականացման համար նախատեսված պայմանները: Մասնավորապես, որևէ տվյալ չի ներկայացվել Դիմողի՝ Հայաստանի Հանրապետություն ժամանելու և այդ մասին Փաստաբանին տեղեկացնելու կամ փորձելու վերաբերյալ: Դիմողը նման ապացույցներ կամ դիրքորոշում չի ներկայացրել նաև 03.06.2026թ. գրությամբ համապատասխան առաջարկ ստանալուց հետո: Հետևաբար չի ապացուցվել, որ փաստաբան Տիգրան Սարգսյանը հանձնարարության կատարման ընթացքում կանոնավորապես չի տեղեկացրել Դիմողին դրա ընթացքի մասին կամ չի պատասխանել նրան հետաքրքրող հարցերին, ուստի Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի խախտումը հաստատված չէ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով չեն հաստատվել Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտումները, ուստի հաստատված չեն նաև Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի խախտումները:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 2004) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-26157 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-26157-2-Ա
22 հուլիսի 2026թ.
ք.Երևան